Թանկագին ընկերներ, հայրենակիցներ։

Վերջերս ստեղծված իրավիճակը ինձ ստիպում է դիմել հանրապետության աշխատավորներին։

Մեր ապրած ժամանակը լի է դրամատիզմով, տագնապներով ու հույսերով։ Վերակառուցումը հզոր ազդակ է հաղորդել մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցությանը, մեզ վստահություն ներշնչել, որ դեմոկրատացումը և հրապարակայնությունը կօգնեն ավելի ակտիվորեն լուծել քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի պրոբլեմները։ Երկրում դժվարին պայքար է մղվում ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների վերականգնման, պատմությունը ստալինականության, լճացման ժամանակների կուտակումներից մաքրելու համար։

Մենք, իրոք, չափազանց ծանր, դժվարին ժամանակներ ենք ապրում։ Մեր ռեգիոնում հրադրությունը ծայրաստիճան շիկացել է, դարձել ծրհասական։ Ճշմարտության հանդեպ մեղանչած չեմ լինի, եթե ասեմ, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև լարվածությունը հասել է գագաթնակետի։ Երկու ժողովուրդները կանգնած են իր հետևանքներով վտանգավոր առճակատման առջև։ Նրանց խորթացումը վերաճում է թշնամանքի։ Եկեք իրերն իրենց անուններով կոչենք։ Մենք կանգնած ենք ազգամիջյան պատերազմի եզրին։

Անմեղ զոհված մարդկանց արյուն, հազարավոր գաղթականներ, մոխրացած տներ, հոգեմաշ նյարդային մթնոլորտ՝ ահա այն, ինչ ունենք մենք այսօրվա դրությամբ։ Լարվածության հետագա բորբոքումը մայրերի վշտից ու արցունքից բացի ուրիշ ոչինչ չի կարող բերել երկու հանրապետությունների ժողովուրդներին։ Հայաստանը դարերի փորձությանն է դիմացել, նա դիմագրավեց անգամ սարսափելի երկրաշարժին։ Եվ մի՞թե մենք այժմ զավակնե՛ր պիտի կորցնենք ազգային երկպառակության պատճառով։

Ես դիմում եմ ձեզ, թանկագին հայրենակիցներ, քանի որ հավատացած եմ, որ իմ խոսքերը արձագանք կգտնեն ձեր սրտերում։ Սա ես համարում եմ կոմունիստի՝ իմ պարտքը, հա՛յ մարդու իմ պարտքը։

Մենք բազմիցս խոսել ենք ստեղծված իրադրության իրական պատճառների ու հանգամանքների մասին, այդ թվում նաև ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում։ Այսօր խոսքն այլ բանի մասին է։ Չէ որ այս ճգնաժամը կարող է աղետի վերածվել, եթե մենք վճռակորեն և հաստատակամորեն չընդդիմանանք դրան։

Մերժելով ամեն մի բռնություն, մենք մշտապես անվանել ենք կպաշտպանենք մեր ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը, նրա սուվերեն իրավունքները, վճռական հակահարված կտանք այն բոլոր կոչերին ու գործողություններին, որոնք սրում են իրադրությունը, դրանով իսկ վնաս հասցնում նաև ազգամիջյան հարաբերություններին։

Մեր ժողովրդի իմաստնությունն ու համբերատարությունը, ցանկացած, անգամ ամենաանբարենպաստ հանգամանքներում արարելու նրա ընդունակությունը քաջ հայտնի են։ Այդ հատկանիշները նրան հնարավորություն են տվել տոկալ, դարերի ընթացքում այսօրվան հասցնել իր ստեղծագործական հանճարը, մշակույթի իր գլուխգործոցները։

Վստահ եմ, որ մեր ժողովուրդը հավատարիմ կմնա դարերի ընթացքում մշակված իր վեմ հատկանիշներին։ Եվ այսօրվա աննախադեպ շիկացած մթնոլորտում նա հանդես կգա որպես խաղաղության ու արդարության, որպես օրինականության ու իրավակարգի ջատագով։

Ատելությունն ու թշնամանքը անպատի անձայր ու հոգնատանջ ճանապարհի պես չեն հասցնի որևէ նպատակի։ Մենք մեր գործերում ու մտորումներում պետք է ելնենք այն բանից, որ խորհրդային երկու ժողովուրդներին վիճակված է ապրել կողք-կողքի։

Ժողովուրդները կարո՞ղ են, ժողովուրդները պե՞տք է համաձայնության գան։ Ես դիմում եմ հանրապետության կոմունիստներին, բոլոր աշխատավորներին, դիմում եմ մտավորականությանը, մեր վետերաններին ու կանանց, երիտասարդությանը, նախաձեռնող խմբերին և շարժումներին, հանուն հայ ազգի իղձերի, հանուն նրա նվիրական նպատակների՝ եկեք խելամիտ ուղիներ որոնենք երկու ժողովուրդների փոխըմբռնման համար, եկեք կամուրջներ գցենք ազգամիջյան երկպառակության անդունդի վրայով։

Ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ ԽՄԿԿ Կենտկոմի նախաձեռնությամբ օրերս Մոսկվայում կկայանա Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամների հանդիպում։ Ես հուսով եմ, որ այդ երկխոսությունը, որքան էլ այն դժվարին լինի, կարող է մեր երկու հանրապետություններին օգնել դուրս գալու ճգնաժամային վիճակից։ Մարդկանց սուր կերպով հուզող հարցերը կարող են լուծվել միայն արդարացի՛, սահմանադրակա՛ն ուղիով։ Այլ կերպ չի կարելի ո՛չ լուծել դրանք, ո՛չ էլ խանգարել դրանց լուծմանը։ Այս ճշմարտությունը պետք է յուրացնեն ամենքը։

Ուշադրությամբ խորամուխ եղեք «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» ԽՄԿԿ կոմկուսի ծրագրի նախագծին, որը համաժողովրդական քննարկման է դրված։ Այդ փաստաթուղթը պարունակում է ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր ազգերի ու ազգությունների ճշմարիտ իրավահավասարության կոնցեպցիան։ Այստեղ նախատեսված են Խորհրդային ֆեդերացիայի վերակառուցման մի շարք միջոցառումներ։ Ծրագրի առթիվ այս օրերին ընտացվում են բազմաթիվ դիտողություններ ու առաջարկություններ, որոնք կապված են մասնավորապես ազգամիջյան կոնֆլիկտների լուծման հետ։ Դրանք բոլորը ամենայն ուշադրությամբ կքննարկվեն։

Անշուշտ, կարևոր որոշումներ կընդունվեն ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերություններին նվիրված առաջիկա պլենումում։ Պլենումը առանձնակի ուշադրություն կնվիրի ազգային շահերի, ազգային արժեքների պաշտպանության իրական մեխանիզմների մշակման, խորհրդային ֆեդերացիայի կատարելագործման հարցերին։ Պլենումի առաջարկությունները կդրվեն երկրի պետական իշխանության բարձրագույն մարմնի՝ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի քննարկմանը։ Մեր ռեգիոնում իրադրության կարգավորման անհետաձգելի հարցերը, ինչպես գիտեք, քննարկման առարկա կդառնան նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանում։

Ես այսօր մեր ժողովրդին կոչ եմ անում միավորել իր մտավոր ու բարոյական ուժերը։

Այսօր մենք այնքա՞ն շատ հոգս, այնքա՞ն որբ ու վիշտ ունենք, որ չենք կարող հանձնվել զգացմունքներին և կրքեր խրախուսել։ Մեր ընդհանուր հոգսը ազգային չլուծված հարցերն են, մեր ամենքիս ցավը՝ երկրաշարժից տուժածները, գաղթականները, մարդիկ, որոնք կորցրել են հարազատներին ու մերձավորներին, կորցրել են տուն ու տեղ, աշխատանք, հանգիստ։ Մեր պարտքն է նրանց շրջապատել հոգատարությամբ, նրանց որքան կարելի է շուտ վերադարձնել նորմալ կյանքի, վերականգնել երկրի երեսից ջնջված քաղաքները և գյուղերը։

Դրա համար մեզ խաղաղություն է հարկավոր։ Ժամանակն է, որ վերջ տրվի անիմաստ ու վտանգավոր առճակատմանը։ Բարիդրացիությունը մեր երկու ժողովուրդների գոյակցության միակ ուղին է։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար

Ս. Գ. Հարությունյանի ելույթը

հայկական հեռուստատեսությամբ 1989 թ. օգոստոսի 29-ին